ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МАРЗ АРМАВИРА
ОБЩИНА АРТАМЕТ

Արմավիրի մարզ գ. Արտամետ

Марз Армавира с. Артамет

05.02. 2013թ.

ՀՀ Արմավիրի մարզպետ
պարոն՝ Ա. Ղահրամանյանին

Հարգելի պարոն մարզպետ՝

Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Արտամետ գյուղական համայնքի ավագանու 2013 թվականի հունվարի 30-ի թիվ 01 նիստում ընդունված որոշումները:

Համայնքի ղեկավար Ա. Գավրյան

1078-13
05 02 2013

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ**
**ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ**

---

*30 հունվարի 2013թ.*

# ՈՐՈՇՈՒՄ N 1

## ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԹԻՎ 1

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել Արմավիրի մարզի Արտամետ գյուղական համայնքի ավագանու 2013 թվականի հունվարի 30-ի թիվ 01 նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝ Տ.Ղազարյան

Մ.Ղազարյան

Վ.Միսակյան

Ա.Ամիրխանյան

Ռ.Հասոյան

**Համայնքի ղեկավար** **Ա.Դավթյան**

*Հավելված*
*ՀՀ Արմավիրի մարզի*
*Արտամետ գյուղական*
*համայնքի ավագանու 2013թ-ի*
*հունվարի 30-ի թիվ 1 որոշման*

# *ՕՐԱԿԱՐԳՈՒՄ*

1. *Օրակարգի հաստատում*
2. *ՀՀ Արմավիրի մարզի Արտամետ գյուղական համայնքի 2012 թվականի դեկտեմբերի 7-ի «2013 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 4-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:*
3. *ՀՀ Արմավիրի մարզի Արտամետ գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

# ՈՐՈՇՈՒՄ N 2

30.01.2013թ. գ.Արտամետ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՄԵՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի ԹԻՎ 4-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ մասի առաջին կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտամետ գյուղական համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 7-ի «2013 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 4-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) Որոշման հավելվածում տարեսկզբի ազատ մնացորդը՝ 582400 ՀՀ դրամը ուղղել ֆոնդային բյուջե՝ 01.1.1 հատվածի 5122 հոդվածին:

2)01.1.1 հատվածի 4214 հոդվածից պակասեցնել 100000 ՀՀ դրամ:

01.1.1 հատվածի 4221 հոդվածից պակասեցնել 150000ՀՀ դրամ և ուղղել 01.1.1 հատվածի 4239 հոդվածին 15000 ՀՀ դրամ և 01.1.1 հատվածի 4241 հոդվածին 235000 ՀՀ դրամ:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ՝ Տ.Ղազարյան

Մ.Ղազարյան

Վ.Միսակյան

Ա.Ամիրխանյան

Ու.Հասոյան

**Համայնքի ղեկավար՝** **Ա.Դավթյան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
## ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

Արմավիրի մարզ գ.Արտամետ Марз Армавир с. Артамет

# ՈՐՈՇՈՒՄ N 3

**30.01.2013թ.** **գ.Արտամետ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՄԵՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ մասով և 32-րդ հոդվածի առաջին մասով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով համայնքի ավագանին

## ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Արտամետ գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի կառուցվածքը՝ համաձայն N 1 հավելվածի:
2. Հաստատել Արտամետ գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N2 հավելվածի:
3. Արտամետ գյուղական համայնքի ղեկավարին՝ Արտամետ գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու առաջարկությամբ մեկշաբաթյա ժամկետում սահմանված կարգով դիմել ՀՀ կառավարության լիազորված պետական կառավարման մարմին:
4. Ուժը կորցրած ճանաչել Արտամետ գյուղական համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 7-ի «Արտամետ գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 3 որոշումը:

5 . Սույն որոշման 1-ին, 2-րդ և 4-րդ կետերն ուժի մեջ են մտնում Արտամետ գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

**Ավագանու անդամներ՝** Տ.Ղազարյան

Մ.Ղազարյան

Վ.Միսակյան

Ա.Ամիրխանյան

Ու.Հասոյան

Համայնքի ղեկավար՝ Ա.Դավթյան